

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՇՏԱՑՄԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվ հարկային փոփոխությունների փաթեթ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍԾԱՆ

Գործարար միջավայրի բարելավմանը եւ մասնավորապես բիզնես սկսելու ծախսերի նվազեցմանն ու բիզնեսի վարման հեշտացմանն էին ուղղված երեկ կառավարության հավանությանն արժանացած մի շարք օրենքների փոփոխությունները: Կառավարությունը նաեւ հաստատեց հարկային օրենքների փոփոխությունների փաթեթ: Այս ամենը լրագրողներին ներկայացրին արդարադատության փոխնախարար **Գեւորգ Մալխոսյանը**, էկոնոմիկայի փոխնախարար **Վահե Դանիելյանը**, պետականուսների կոմիտեի փոխնախագահներ **Ահարոն Զիլինգարյանը** եւ **Արմեն Ալավերդյանը**:

Հստակեցում եւ նոր հարկատեսակ՝ արտոնավճար

Ահարոն Զիլինգարյանը անդրադարձավ հարկային օրենքների հստակեցումներին: Համաձայն դրանց, շահութահարկի դաշտում կհայտնվեն գործունեությունը սկսած տնտեսվարողները, որոնք դեռ չեն սկսել իրացումը: Սովորական հարկման դաշտում գտնվողների համար նվազեցում է նախատեսվում ոչ միայն առևտրի մնացորդի, այլև հումքի մնացորդի համար, որը կգործի արդեն 2008-ի վերջի համար: Վարձակալության տրվող շինություններից, անկախ նրանց վարձակալության արժեքից, կգանձվի շինության կադաստրային արժեքի 5 տոկոսը: Օտարերկրյա ներդրողներից Հայաստանում գրանցվածների եւ չգրանցվածների համար տարբեր հարկային դրույքներ էին գործում, այժմ երկուսի համար էլ կգործի 10 տոկոս դրույքաչափը: Կառուցապատողների հարկմանն առնչվող օրենքում կար դրույթ, որ կառուցվող շենքի 10 տոկոսը, որը չի կարող ավելի լինել 500 ԲԱ-ից, մնում է կառուցապատողի օգտագործման տակ: Անորոշ էր մնում, թե ինչպես պետք է լիներ, եթե շենք կառուցողները մի ֆանիսն էին: Այդ դեպքի համար եւս հարկման ոչ ենթակա տարածքը մնալու է նույնը: Հարկային փոփոխություններով իրավաբանական անձանց հնարավորություն կտրվի ինֆնուրույն ուղղելու հաշվետվություններում իրենց նկատած սխալները եւ վերստին ներկայացնելու:

Ահարոն Զիլինգարյանի ներկայացրած օրինագծերից մեկը նորություն էր: Մանր բիզնեսի համար, որի շրջանառությունը չի գերազանցում տարեկան 2,5 մլն դրամը, ներդրվելու է արտոնավճարների

համակարգը: Այն մարդիկ, որոնք տանը զբաղված են ինչ-որ գործունեությամբ, օրինակ՝ դերձակը, կրկնուսույցը, գյուղի դարբինը եւ այլք, որոնց ցանկը սահմանված է, կարող են դիմել հարկային ծառայություն եւ ստանալ հարկ վճարողի հաշվառման համար՝ առանց անհատ ձեռներեց գրանցվելու: Դրանով նրանք վճարում են տարեկան 20 հազարից մինչեւ առավելագույնը 100 հազար դրամ եւ այլեւս հարկային որեւէ վճարման կամ հարկային ստուգումների հետ առնչություն չեն ունենում:

Նոտարները, որ այժմ համարվում են պարզեցված հարկ վճարող, եկող տարվանից կհայտնվեն հարկման ընդհանուր դաշտում, բայց հարկ չեն վճարի եկամտի աղբյուրի մաս գործարք կատարելիս, այլ կներկայացնեն հայտարարագիր:

Հյուրանոց-սաունա-ռեստորաններն ու Երեւանի կենտրոնի վարսավիրանոցները ավելի շատ կվճարեն

Արմեն Ալավերդյանը հայտնեց, որ բարձրանալու են գործունեության որոշ տեսակներից գանձվող հարկերի դրույքաչափերը: Մասնավորապես, դա վերաբերում է տաֆսի ծառայություններին, խաղատներին, շահումով խաղերին: Օրինակ՝ տաֆսի ծառայությունները մեկ մեֆենայի համար ներկայումս վճարած ամսական 6800 դրամի փոխարեն կվճարեն 10 հազար դրամ: Դա, Արմեն Ալավերդյանի հավաստմամբ, այդ ընկերությունների հասույթի վրա մեծ ազդեցություն չի գործի, քանի որ ներկայումս գանձվող ամսական վճարը մեկ մեֆենայի 1 օրվա հասույթից էլ փոքր գումար է:

Հյուրանոցների եւ հյուրանոցային ծառայություններ ունեցողների հարկումը կտարանջատվի: Նրանք, ում հիմնական գործունեությունը հյուրանոցայինն է, կընդգրկվեն ավելի խթանող հարկման դաշտում: Իսկ նրանք, որոնք հանգրվաններ են եւ հյուրանոցային գործունեությունից բացի իրականացնում են նաեւ այլ գործունեություն՝ ռեստորան, սաունա, բիլիարդ եւ այլն, կհարկվեն հաստատագրված վճարով՝ 1 ֆմ դիմաց այդ օբյեկտներից կգանձվի 3000 դրամ: Հիմք կընդունվի անշարժ գույքի կադաստրի սված վկայականում նշված տարածքի չափը: «Ազգի» այն հարցին, թե մինչեւ այս փոփոխության գործելն ի՞նչ հարկով էին հարկվում այս օբյեկտները, Արմեն Ալավերդյանը պատասխանեց, որ նրանք հարկվում էին սովորական հարկման դաշտով, ինչը նրանց սովերում գործելու հնարավորություն էր տալիս:

Երևանի Կենտրոն համայնքում գործող վարսավիրանոցներն ավելի բարձր հարկ կվճարեն՝ մեկ արտի համար ներկայիս 14 հազար դրամի փոխարեն՝ 23 հազար դրամ ամսական: Նրանց նկատմամբ լրացուցիչ գործակից կկիրառվի, եթե բացի վարսահարդարումից, իրականացնում են մազերի եւ մաշկի խնամքի այլ գործողություններ:

Գազալիցֆավորման կայանների հաստատագրված վճարները կինդեֆսավորվեն, այսինքն, կբարձրանան 15 տոկոսի չափով: Տեղական եւ ներմուծվող ծխախոտների համար կզանձվի միատեսակ հաստատագրված վճար՝ ֆիլտրով ծխախոտների համար կավելանա 1000 դրամով եւ 5500 դրամից կդառնա 6500 դրամ: Մինչեւ 40 մլն դրամ արժողությամբ գույք եւ մինչեւ 150 ձիաուժ հզորության մեֆենա ունեցող ժամկետային զինծառայողները ծառայության ժամանակ կազատվեն գույքահարկ վճարելուց: Այսպես կոչված, օդի հարկը նույնպես կվերանա, բայց, հավանաբար, եկող տարվա ընթացքում եւ կընդգրկվի ավիատոմսի արժեքի մեջ:

Պատասխանելով «Ազգի» հարցին, թե բյուջետային ի՞նչ մուտքերի ակնկալիքներ կան հարկային փոփոխություններով, Արմեն Ալավերդյանն ասաց, որ հարկային փոփոխությունները հիմնականում արվել են հարկերի պարզեցման նպատակով եւ 4 մլրդ դրամի հարկային մուտքերի ավելացման ակնկալիք կա միայն հաստատագրված վճարների առումով: Ծխախոտի վճարի բարձրացման համար էլ այդ ակնկալիքը տատանվում է 2,6-5 մլրդ դրամի սահմաններում:

Ձեն պահանջվի կնիք եւ նվազագույն կանոնադիր կապիտալ

Առևտրային կազմակերպությունների գրանցման հեշտացմանն ուղղված օրենքի նախագծերը ներկայացրեց արդարադատության փոխնախարար Գեորգ Մալխասյանը: Նա նշեց, որ այդ հեշտացումները չեն վերաբերում բանկերին, հասարակական կազմակերպություններին եւ կուսակցություններին:

Ըստ առաջարկվող փոփոխությունների, իրավաբանական անձը պարտավոր չէ ունենալ կնիք, որը դեռևս ամբողջությամբ չի վերանում, քանզի օրենսդրական այլ փոփոխությունների անհրաժեշտություն կա, եւ դեռևս լիարժեք չի գործում էլեկտրոնային ստորագրությունը: Այնուհետև՝ բաժնետիրական ընկերությունների ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար պարտադիր չէ 100 հազար դրամ եւ 50 հազար դրամ նվազագույն կանոնադիր կապիտալի պահանջը: Ընկերություններն իրենք կորոշեն, թե որքան կլինի այն:

Պետությունն այլևս չի պահանջի, որ կազմակերպություններն իրենց կանոնադրությունը համապատասխանեցնեն օրենսդրությանը: Եթե դրանցում լինի հակասություն օրենքին, ապա հիմք կընդունվի օրենքը: Արդարադատության փոխնախարարի հավաստմամբ, մոտ ապագայում խնդիր կդրվի ընդհանրապես հանել առևտրային կազմակերպություններից կանոնադրություն ունենալու պահանջը: Իսկ այնուհետև կներդրվի «մեկ պատահանի» սկզբունքը՝ երբ ռեգիստրում, բացի ֆիրմային անվանում ստանալուց, գործունեություն սկսող ընկերությունը կստանա նաև հարկ վճարողի համարը:

Ամփոփելով ներկայացվածը, էկոնոմիկայի փոխնախարար Վահե Դանիելյանը նշեց, որ այս միջոցառումները անցկացնելուց հետո Հայաստանը կհայտնվի բիզնեսի հեշտացման ցուցանիշով աշխարհի առավել բարենպաստ պայմաններ ունեցող երկրների 10 տոկոսի մեջ, ինչը նշված է եղել նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական էլ կառավարության ծրագրերում: Այսինքն, 167 երկրների շարքում ներկայիս 44-րդ տեղի փոխարեն Հայաստանը կբարձրանա առնվազն մինչև 17-րդ տեղ:

«Ե՞րբ կսկսեն գործել այս օրենքների փոփոխությունները» մեր հարցին պատասխանելով, երեկվա մամուլի ասուլիսի բանախոսները հայտնեցին, որ այս բոլոր փոփոխությունները կսկսեն գործել Աժ-ում ընդունվելուց հետո, մինչև տարեվերջ կամ եկող տարվա սկզբից:

